

ԿԱՏԱՐՈՒԵՑԱԲ ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԾԵՍԱՐԱՆԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՐԿԷՔԸ

Յուլիս 11ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ Գեորգեան Հոգեւոր Ծեմարանի ուսումնական յարկաբաժնին կից մասնաշէնքի հիմնարկէքը: Արարողութեան կը մասնակցէին Մայր Աթոռի միաբանները եւ շինութեան բարերարներ՝ Տէր եւ Տիկին Պետրոս եւ Աննա Օրունջաքճիէլի գաւակը՝ Սայաթ Օրունջաքճիէլ:

Արարողութեան ընթացքին Նորին Սրբութիւնը օրհնեց կառուցուող շինութեան հիմերը, որ պիտի ծառայէ իբրեւ հանդիսութիւններու դահլիճ եւ մարզասրահ Գեորգեան Հոգեւոր Ծեմարանի սաներուն համար: Ապա Ծեմարանի Տեսուչ՝ Գերշ. Տ. Սահակ Եպս. Մաշալեան կարդաց կառոյցի շինարարութեան յիշատակարանը, որ զետեղուեցաւ շինութեան հիմին մէջ:

Նորին Սրբութիւնը իր պատգամը ուղղեց ներկաներուն: Վեհափառ Հայրապետը վստահութիւն յայտնեց, որ ճեմարանական կեանքի բարելաւումը նոր խթան պիտի դառնայ, որպէսզի Ծեմարանի սաները աւելի եռանդով ու նուիրումով շարունակեն ուսումը իբրեւ ապագայ եկեղեցականներ: Նոր մասնաշէնքի կառուցման առիթով Նորին Սուրբ Օծութիւնը իր գնահատանքն ու օրհնութիւնը յղեց մասնաշէնքի բարերարներուն՝ Ամերիկաբնակ Տէր եւ Տիկին Պետրոս եւ Աննա Օրունջաքճիէլին, անոնց մաղթելով ոյժ, եռանդ ու յաջողութիւն, որպէսզի կարողանան իրենց ազգաշէն եւ եկեղեցանուէր ծառայութիւնը շարունակել ինչպէս Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին մէջ, այնպէս ալ Հայրենիքէն ներս: